

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի Սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Էջմիածնի Մայր Տաճարում, խարտավիլակությամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի և ընթերակայությամբ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի ու Միացյալ Նահանգների Հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ եպիսկոպոս Պարսամյանի, սրբալույս մյուռոնի օծմամբ եպիսկոպոս ձեռնադրեց չորս վարդապետների՝ համաձայն կարգաց և կանոնաց Հայաստանյայց Առաքելական սուրբ Եկեղեցու:

Ձեռնադրված հոգևորականներն են՝

1. Տ. Հուսիկ եպիսկոպոս Պաղտասյան՝ ձեռնադրված Երուսաղեմի հայոց Սուրբ Աթոռի վրա՝ համաձայն Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովի որոշման, ծնյալ 1936թ. ԱՄՆ-ում:

2. Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյան՝ ձեռնադրված Հարավային Ֆրանսիայի հայոց իբրև առաջնորդ և փոխանորդ Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի, ծնյալ 1937 թ. Բեյրութ քաղաքում:

3. Տ. Գարեգին եպիսկոպոս Պեքճյան՝ ձեռնադրված Գերմանիայի հայոց թեմի վրա իբրև թեմակալ առաջնորդ, ծնյալ 1942 թ. Իսթամբուլ քաղաքում:

4. Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյան՝ ձեռնադրված Ծվեյցարիայի հայոց թեմի վրա իբրև թեմակալ առաջնորդ, ծնյալ 1952 թ. Սղերթում (Թուրքիա):

Պատշաճ հանդիսավորությամբ տեղի ունեցած սրբազան արարողություններին ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած Հայ Առաքելական Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, հայրենի արվեստագետներ, սփյուռքահայ ուխտավորներ և հավատացյալ ժողովրդյան հոծ բազմություն:

Նորապսակ եպիսկոպոսները իրենց ուխտի պատարագը մատուցեցին Սեպտեմբերի 28-ին, 29-ին և Հոկտեմբերի 4-ին Մայր Տաճարում, Երևանի Ս. Սարգիս և Ստեփանավանի Ս. Աստվածածին եկեղեցիներում:

«Լցո՛ Տէր զսուսա հոգւովդ Քով սրբով, զօրացո՛ և յաջողեա՛ սոցա օգնականութեամբ Քով յամենայն գործս բարիս». Ամեն:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
5 Հոկտեմբեր 1992 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԵՐՈՎ ԵՎ ՆՈՐԱՕԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՎ

(29 սեպտեմբերի 1992 թ.)